



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4343

լեռարներ ըլլոր յերկրներէ, Վիպցեք

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (Բ)
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

1003
13677

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՍԵԿՐԵՏ

3 K 0

2-22



17.09.2013
ՅԿՊ
2-22

7312

1 JUL 2005
14 NOV 2009

I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցութեան անդամ համարվում է ամեն վոք, վոր ընդունում է կուսակցութեան ծրագիրը, աշխատում է նրա կազմակերպութեան ներքին մեկն ու մեկում, յենթարկվում է կուսակցութեան վորոշումներին և անդամավճար է տալիս:

2. Նոր անդամներ ընդունվում են այն թեկնածուներից, վորոնք անցել են քաղաքական գրագիտութեան շկոլան և սահմանված թեկնածուական ստաթը:

Թեկնածուներից կուսակցութեան անդամ ընդունելու կարգը հետեյալն է.

ա) Սահմանվում է յերեք կատեգորիա.

1. Բանվորներ և Կարմիր-բանակայիներ—

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատ. 755, Պատվ. 4306, Տիրաթ 8000

բանվորները ու գյուղացիները շարքերից :

2. Գյուղացիներ (բացի Կարմիր-բանակա-
յիններից), տնայնագործներ, վորոնք չեն շա-
հագործում ուրիշի աշխատանքը և՛

3. այլք (ծառայողներ և այլն) :

Առաջին կատեգորիան բաժանվում է յեր-
կու խմբի :

Առաջին կատեգորիայի առաջին խմբի մեջ
են մտնում այն արդյունաբերական բանվորնե-
րը, վորոնք անընդհատ զբաղված են վարձու
Փիզիքական աշխատանքով :

Առաջին կատեգորիայի յերկրորդ խմբի մեջ
մտնում են վոչ-արդյունաբերական բանվորնե-
րը՝ բանվորների ու գյուղացիների շարքերից
յերաժ Կարմիր-բանակայինները և բատրակ-
ները :

բ) Առաջին կատեգորիայի առաջին խմբի
անձնավորությունները կուսակցության մեջ ըն-

գունվելու համար ներկայացնում են մեկ տար-
վա կուս. ստաժ ունեցող կուսակցության յեր-
կու անդամի յերաշխավորություն. առաջին կա-
տեգորիայի յերկրորդ խմբի անձնավորություն-
ները—յերկու տարվա կուս. ստաժ ունեցող կու-
սակցության յերկու անդամի յերաշխավորու-
թյուն. յերկրորդ կատեգորիայի անձնավորու-
թյունները ներկայացնում են յերկու տարվա
կուս. ստաժ ունեցող կուսակցության յերեք ան-
դամի յերաշխավորություն. յերրորդ կատեգո-
րիայի անձնավորությունները—հինգ տարվա
կուս. ստաժ ունեցող կուսակցության հինգ ան-
դամի յերաշխավորություն :

Ծանոթություն. —Կոմյերիտիությունից առաջին
և յերկրորդ կատեգորիայով կուսակցության
անդամ ընդունելիս՝ ՀԱՄԼԿՅԵՄ կոմիտեյի
յերաշխավորությունը հավասար է համարվում
կուսակցության մեկ անդամի յերաշխավորու-
թյան :

գ) Այլ կուսակցություններից յերաժներն

ընդունվում են բացառիկ դեպքերում, հինգ տարվա կուս. ստաժ ունեցող կուսակցութեան հինգ անդամի յերաշխավորութեամբ, միմիայն արտադրական բջիջի միջոցով և անպայման Կենտկոմի հաստատութեամբ, անկախ ընդունվողի սոցիալական դրությունից:

Ծանոթութիւն.—Այլ կուսակցութեաններէց յեւրաձների ընդունման վերջնական հաստատման իրավունքը Կենտկոմը կարող եւ տալ առանձին յերկրային կոմիտեաների և կոմկուսի ազգային կենտկոմներին:

դ) Հանձնարարականի ստուգումը նախորդում եւ ընդունելուն և այդ պարտականութեան ընկնում եւ կուսակցութեան տեղական կոմիտեաների վրա:

յե) Կուսակցութեան մեջ ընդունվելու հարցը նախապես քննվում եւ բջիջում, վճռվում եւ կազմակերպութեան ընդհանուր ժողովում և ուժի մեջ եւ մտնում կուսկոմի հաստատումից հետո. առաջին կատեգորիայի համար պահանջ-

վում եւ գավկոմի ու ռայկոմի (քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում) հաստատութեանը. յերկրորդ և յերրորդ կատեգորիաների համար՝ շրջանային (окружной) կամ նահանգական կոմիտեյի հաստատութեանը:

Քաղաքների ռայոնական կազմակերպութեաններում կուսակցութեան մեջ ընդունելու հարցը վճռվում եւ կուսակցութեան անդամներէ ընդհանուր ժողովում: Քաղաքային ռայոններում հազարից ավելի կուս. անդամ և թեկնածու լինելու դեպքում՝ ընդունելութեանը կատարվում եւ ռայկոմի պլենումում, առանց ընդհանուր ժողովի սանկցիայի:

զ) Յերիտասարդութեանը մինչև քսան տարեկան հասակը ներառյալ (բացառութեամբ Կարմիր-բանակայինների) կուսակցութեան մեջ եւ մտնում միմիայն ՀԱՄԼԿՅՅԵՄ միջոցով:

Յ. Յերաշխավորողները պատասխանատու յեն իրենց յերաշխավորածների համար, և ան-

հիմն յերաշխափորություններ տալու դեպքում՝
յենթարկվում են կուսակցական պատժի՝ մինչև
կուսակցությունից վտարվելը:

4. Թեկնածուներից կուսակցության անդամ
ընդունվողներին կուս. ստաժը հաշվվում է
տվյալ ընկերոջ կուսակցության անդամ հաս-
տատվելու մասին համապատասխան բջիջի
ընդհանուր ժողովի վորոշման որից:

5. Մի կազմակերպության յուրաքանչյուր
անդամ ուրիշ կազմակերպության աշխատանք-
ների վայրը փոխադրվելու դեպքում՝ վերջինիս
կողմից մտցվում է իր անդամների շարքը:

Ծանոթություն.—կուսակցության անդամների մի
կազմակերպությունից մյուսը փոխադրվելը
կատարվում է համաձայն կուսակցության
կենտրոնի սահմանած կանոնների:

6. Վորևե մեկին կուսակցությունից վտա-
րելու հարցը վճռվում է այն կազմակերպության
ընդհանուր ժողովում, վորի անդամ է տվյալ

անձնավորությունը, և հաստատվում է նահան-
գական (չրջանային) վերահսկիչ հանձնաժողովի
կողմից կամ թե վտարումը ուղղակի նահանգա-
կան (չրջանային) վերահսկիչ հանձնաժողովն է
կատարում: Վտարման մասին կայացրած վո-
րոշումն ուժի մեջ է մտնում միայն նահանգա-
կան (չրջանային) կոմիտեյի հետ համաձայնե-
ցնելուց հետո, ըստ վորում՝ ընդհանուր ժողովի
կամ նահանգական Վ. Հ (չրջ. Վ. Հ.) կողմից
վտարելու որից՝ տվյալ անձնավորությունը
հեռացվում է կուսակցական աշխատանքից:
Կուսակցությունից վտարված անդամների վո-
տարման մասին հայտարարվում է կուսակցա-
կան մամուլում՝ նշելով վտարման պատճառ-
ները:

II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7. Բոլոր այն անձնավորությունները, վո-

րոնք ցանկանում են կուսակցութեան շարքերը մտնել՝ անցնում են թեկնածուական վորոչ ստաժ, վորի նպատակն է հիմնավորապես ծանոթացնել նրանց կուսակցութեան ծրագրի և գործելակերպի հետ և ստուգել թեկնածուի անհատական հատկութիւնները:

8. Թեկնածուներ ընդունելու կարգը (կատեգորիաների բաժանումը, յերաշխափորութիւնների բնույթն ու ստուգումը, ընդունելութեան մասին կազմակերպութիւնների հանած վորոչումներն ու կուսկոմի հաստատումը) վոչնչով չի տարբերվում կուսակցութեան անդամ ընդունելու կարգից:

9. Թեկնածուական ստաժը սահմանվում է.— առաջին կատեգորիայի համար— վեց ամսից վոչ պակաս, յերկրորդ կատեգորիայի համար— մեկ տարուց վոչ պակաս և յերրորդ կատեգորիայի համար— յերկու տարուց վոչ պակաս:

Ծանոթութիւն.— Ուրիշ կուսակցութիւններից յեւրածները, անկախ նրանց սոցիալական դրութիւնից, անցնում են յերկու տարվա թեկնածուական ստաժ:

10. Կուս. անդամութեան թեկնածուները մասնակցում են այն կազմակերպութեան բոլոր դռնբաց ժողովներին, վորի կազմի մեջ են մտնում: Կուս. անդամութեան թեկնածուները կուսակցական ժողովներում վճռական ձայնի իրավունք չունեն, այլ մասնակցում են միայն խորհրդակցական ձայնի իրավունքով:

11. Թեկնածուները տեղական կուսակցական կոմիտեյի գանձարկղին վճարում են սոփորական անդամավճար:

III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

12. Կուսակցութեան կազմակերպչական կառուցվածքի ղեկավար սկզբունքն է հանդի-

աանում դեմոկրատական կենտրոնացումը (централизм) :

13. Կուսակցութիւնը կառուցւում է դեմոկրատական կենտրոնացման հիմունքներով, ըստ տերրիտորիալ հատկանիշների. վորեւէ ռայոն սպասարկող կազմակերպութիւնը բարձրագույն է համարւում բոլոր այն կազմակերպութիւնների նկատմամբ, վորոնք սպասարկում են տվյալ ռայոնի այս կամ այն մասը :

14. Բոլոր կուսակցական կազմակերպութիւնները տեղական հարցերը վճռելու խընդրում ինքնավար են (автономны) :

15. Յուրաքանչյուր կազմակերպութիւն բարձրագույն ղեկավար մարմին հանդիսանում է ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարը :

16. Ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարն ընտրում է կոմիտե, վորը նրանց գործադիր մարմինն է հանդիսանում և

ղեկավարում է տեղական կազմակերպութիւնամբողջ ընթացիկ աշխատանքը :

17. Կուսակցութիւն կազմակերպչական սխեման հետեյալն է .

ա) ԽՍՀՄ տերրիտորիա—համամիութենական համագումար—Կենտ. Կոմիտե :

բ) Մարզեր (области), հանրապետութիւններ, նահանգներ — մարզային (յերկրային) կոնֆերենցիաներ, ազգ. կոմկուսակցութիւն համագումարներ, նահանգական կոնֆերենցիաներ—մարզային կոմիտեներ (յերկրային կոմիտեներ), ազգային կոմկուսակցութիւն կենտկոմներ, նահանգական կոմիտեներ :

գ) Շրջաններ, գավառներ—շրջանային, գավառական կոնֆերենցիաներ, շրջանային, գավառական կոմիտեներ :

դ) Վոյրստաներ (ռայոններ)—վոյրստային կոնֆերենցիաներ, վոյրստային կոմիտեներ :

յե) Ձեռնարկութիւններ, գյուղեր, Կար-

միւր-բանակային զորամասեր, հիմնարկութիւններ—բջիջների ընդհանուր ժողովներ—բջիջների բյուրոներ:

18. Յենթարկման, հաշվետվութեան և բոլոր կուսակցական վորոշումների ընթացքի ու վիճարկման (оспаривание) կարգը հետևյալն է. (բարձրագուս ինստանցիայից դեպի ստորագուսը)—համամիութենական համագումար, կենտկոմ, մարզային (յերկրային) կոմիտե, ազգ. կոմկուսակցութիւնների կոնֆերենցիա, ազգային կոմկուսների կենտկոմ, նահանգական կոնֆերենցիա և այլն:

19. Կուսակցական աշխատանքի հատուկ ձևերը կատարելու համար՝ հատուկ բաժիններ են ստեղծվում: Բաժինները գործում են կոմիտեներին առընթեր և անմիջականորեն նրանց են յենթարկվում: Բաժինների կազմակերպման կարգը վորոշվում է Կենտկոմի հատուկ հրահանգներով:

20. Յուրաքանչյուր կազմակերպութիւն վերջնական հաստատումից հետո իրավունք ունի իր կնիքն ունենալու, սակայն միայն համապատասխան բարձրագուս կուսակցական մարմնի թույլտվութեամբ:

IV. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

21. Կուսակցութեան գերագուսն մարմինը համագումարն է: Հերթական համագումարները հրավիրվում են տարին մեկ անգամ: Արտակարգ համագումարները հրավիրում է Կենտրոնական կոմիտեն սեփական նախաձեռնութեամբ կամ կուսակցական վերջին համագումարին մասնակցող անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդից վոչ պակասի պահանջով: Կուսակցական համագումար հրավիրելու մասին և համագումարի որակարգը՝ հայտարարվում է վոչ ուշ, քան համագումարից մեկ ու կես

ամիս առաջ: Արտակարգ համազումարը հրա-
վիրվում է յերկու ամսվա ընթացքում:

Համազումարն որինական է համարվում,
յեթե նրանում ներկայացված են կուսակցու-
թյան վերջին հերթական համազումարում ներ-
կայացված բոլոր կուս. անդամների կիսից վոչ
պակաս կուս. անդամներ:

Կուսակցութայն համազումարի ներկայա-
ցուցչական նորմաները սահմանում է Կենտրո-
նական Կոմիտեն:

22. Յեթե 21-րդ կետում մատնանշված
ժամանակամիջոցում Կենտրոնական Կոմիտեն
արտակարգ համազումար հրավիրելի՝ արտա-
կարգ համազումար հրավիրելու պահանջ անող
կազմակերպությունները իրավունք ունեն
ստեղծելու կազմակերպչական կոմիտե, վորը
համազումար հրավիրելու գործում ոգտվում է
Կենտրոնական Կոմիտեյի իրավունքներով:

23. Համազումարը—ա) լսում է ու հաս-

տատում է Կենտրոնական Կոմիտեյի, Կենտրո-
նական Վերահսկիչ Հանձնաժողովի, Կենտրո-
նական Վերաստուգիչ Հանձնաժողովի և այլ
կենտրոնական հաստատությունների հաշվե-
տվությունները:

բ) Վերաքննում ու փոփոխում է կուսակ-
ցության ծրագիրն ու կանոնադրությունը:

գ) Վորոշում է կուսակցութայն գործելա-
կերպի ուղղությունը՝ ընթացիկ հարցերի
նկատմամբ:

դ) Ընտրում է Կենտրոնական Կոմիտե,
Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողով,
Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնաժողով և
այլն:

24. Կենտրոնական Կոմիտեն իրավունք ունի
համազումարի սահմանած կազմակերպչական

Կենտրոնական Կոմիտեյի անդամներին հա-
ռանարու զեպքում նրա կազմակերպչական

1007
13694



մագուժարում ընտրված թեկնածուներին՝ համագումարի վորոշած կարգով:

25. Կենտրոնական Կոմիտեն համագումարին—համագումար ղեկավարում է կուսակցութեան ամբողջ աշխատանքը, կուսակցութեան ներկայացուցիչն է հանդիսանում ուժերի կուսակցութունների, կազմակերպութունների և հիմնարկների հետ հարաբերութեան մեջ մտնելիս, կազմակերպում է կուսակցութեան զանազան հաստատութուններ և ղեկավարում է նրանց գործունեությունը, նշանակում է կենտրոնական օրգանների խմբագրութուններ, վորոնք աշխատում են իր հսկողութեան տակ, հաստատում է տեղական խոշոր կազմակերպութունների, կուսակցական օրգանների խմբագիրներին, կազմակերպում ու պահում է հասարակական նշանակութուն ունեցող ձեռնարկութուններ, բաշխում է կուսակցութեան ուժերն ու միջոցները և իր իրավասութեան տակ է պա-

հում կենտրոնական զանձարկըր:

Կենտրոնական Կոմիտեն կուսակցական Ֆրակցիաների միջոցով սուղութուն է տալիս կենտրոնական, խորհրդային և հասարակական կազմակերպութունների աշխատանքներին:

Կենտրոնական Կոմիտեն առնվազն յերկու ամիսը մեկ անգամ ունենում է մեկ պլենար նիստ: Կենտկոմի տեղամութեան թեկնածուները կենտկոմի պլենումի նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

26. Կենտրոնական Կոմիտեն կազմակերպում է քաղաքական աշխատանքների համար—Քաղաքական Բյուրո, կազմակերպչական աշխատանքների ընդհանուր ղեկավարութեան համար—Կազմակերպչական Բյուրո և ընթացիկ կազմակերպչական ու գործադրական քնույթի աշխատանքների համար—Քարտուղարութուն:

27. Կուսակցական մեկ համագումարին

մինչև մյուսը՝ Կենտրոնական Կոմիտեն հրավիրում է մի կուսակցական համամիութենական կոնֆերենցիա՝ բաղկացած տեղական կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

28. Կենտրոնական Կոմիտեն իր աշխատանքների մասին պարբերաբար ինֆորմացի յե տալիս կուսակցական կազմակերպություններին:

29. Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովն ընտրվում է կուսակցության համագումարի վորոչաձ կազմով:

30. Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնաժողովն ընտրվում է կուսակցության համագումարի վորոչաձ կազմով. ընտրվածների կուսակցական ստաժը տասը տարուց պակաս չպետք է լինի:

Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնաժողովը ստուգում է. — ա) Գործերի ընթացքի արա-

գությունն ու ճշտությունը՝ կուսակցական կենտրոնական մարմիններում և ՀԱՄ.ԿԿ (Բ) Կենտկոմի քարտուղարության ապալարատի կանոնադրությունը. բ) ՀԱՄ.ԿԿ (Բ) Կենտկոմի գրամարկըր և ձեռնարկումները:

V. ՄԱՐԶԱՅԻՆ (ՅԵՐԿՐԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

31. Կուսակցական կազմակերպությունները ՀԱՄ. ԿԿ (Բ) Կենտկոմի թույլտվությամբ կարող են միանալ և կազմել մարզային (յերկրային) միավորներ: Մարզի սահմանները վորոչվում են մարզային (յերկրային) կոնֆերենցիայում և հաստատվում են Կենտկոմի կողմից:

32. Կուսակցական կազմակերպությունները, վորոնք սպասարկում են ԽՍՀՄ-ի և ՌԽՍՖՀ-յան ազգային հանրապետությունների (և մարզի) տերրիտորիան՝ հավասարվում են կուսակցության մարզային (կամ նահանգա-

յին) կազմակերպություններին, այսինքն՝ ամբ-
բողջապէս յենթարկվում է ՀԱՄ.ԿԿ (Բ) Կենտ-
կոմին:

33. Մարզային (յերկրային) կոմիտեն (կամ
ազգ. կոմ. կուսակցութեան կենտկոմը) ընտրը-
վում է մարզային (յերկրային) կոնֆերենցիա-
յում (կամ ազգ. ԿԿ համագումարում):

Ծանոթութիւն.—Յերկրային և նրանց հավասար
կոմիտենների նախագահությունները կամ բյու-
րոնները հաստատվում են ՀԱՄԿԿ (բ.) Կենտ-
կոմի կողմից:

34. Կենտրոնական Կոմիտեյի հատուկ վո-
բոչմամբ այնտեղ, ուր կան մարզային տնտե-
սական մարմիններ, (տնտեսական խորհրդակ-
ցություններ և այլն) կամ կենտրոններից զգալի
չափով հեռու ընկած վայրերում՝ ստեղծվում են
մարզային բյուրոններ, վորոնց նշանակում է
ՀԱՄ. ԿԿ (Բ) Կենտկոմը, յուրաքանչյուր դեպ-
քում հատուկ վորոչում հանելով:

35. Մարզային (յերկրային) հերթական
կոնֆերենցիա (կամ ազգ. կոմկուս. համա-
գումար) հրավիրում է մարզային կոմիտեն
(ազգ. ԿԿ Կենտկոմը)՝ տարեկան մեկ անգամ:

Արտակարգ համագումար հրավիրվում է
մարզային (յերկրային) կոմիտեյի (ազգ. ԿԿ
Կենտկոմի) կամ տվյալ մարզի (յերկրի) կազ-
մակերպությունների անգամների ընդհանուր
թվի մեկ յերրորդի վորոչմամբ:

Մարզային (յերկրային) կոնֆերենցիայի
(ազգ. կոմկուսի համագումարի) ներկայացուց-
չական նորմաները սահմանում է մարզային
(յերկրային) կոմիտեն (ազգ. կոմկուսի կենտ-
կոմը):

Մարզային (յերկրային) կոնֆերենցիան
(ազգ. կոմկուսի համագումարը) լսում և հաս-
տատում է մարզային (յերկրային) կոմիտեյի
(ազգ. կոմկուսի կենտկոմի), վերահսկիչ հանձ-
նաժողովի, վերաստուգիչ հանձնաժողովի և

մարզային (յերկրային) հաստատութիւնների հաշվետվութիւնները, քննութեան եւ անուամբ կուսակցական, խորհրդային, տնտեսական և արհեստակցական աշխատանքները—մարզում կամ հանրապետութեան մեջ և ընտրում եւ մարզային (յերկրային) կոմիտե, մարզային (յերկրային) վերահսկիչ հանձնաժողով և մարզային վերաստուգիչ հանձնաժողով (կենտկոմ, ԿՎՀ, ազգ. կուս. կենտկոմ) :

36. Մարզային (յերկրային) կոմիտեն ընթացիկ աշխատանքները համար՝ իր կազմից ընտրում եւ բյուրո՝ բաղկացած անվազն հինգ հոգուց :

Մարզային (յերկրային) կոմիտեն (ազգ. կոմկուս. կենտկոմը) մարզի սահմաններում կազմակերպում եւ զանազան կուսակցական հաստատութիւններ, ղեկավարում եւ նրանց գործունեյութիւնը, նշանակում եւ մարզային (յերկրային) կուսակցական որդանի խմբա-

գրութիւն, վորն աշխատում ե նրա հսկողութեան տակ, կազմակերպում ու վարում ե իր՝ համամարզային նշանակութիւն ունեցող հաստատութիւնները, ձեռնարկութիւնները, մարզի սահմաններում բաշխում ե կուսակցութեան ուժերն ու միջոցները և վարում ե մարզային (յերկրային) կուսակցական դրամարկղը : Մարզային (յերկրային) կոմիտեն (ազգ. կոմկուսի կենտկոմը) կուսակցական Ֆրակցիաների միջոցով ուղղութիւն ե տալիս խորհուրդները, արհմիութիւնները, կոոպերացիայի և այլ կազմակերպութիւնների մարմինների գործունեյութեանը : Նմանապես անմիջականորեն ուղղութիւն ե տալիս ՀՍՄ. ԼԿՅԵՄ կազմակերպութեան աշխատանքներին և իր գործունեյութեան մասին մանրամասն հաշիվ ե ներկայացնում Կենտկոմին այն ձևով և այն ժամանակամիջոցում, վոր ՀՍՄ.ԿԿ (Բ) Կենտկոմն ե սահմանել :

Մարդային կոմիտեյի (կամ ազգ. կկ կենսո-
կոմի) պլենումը գումարվում է վոչ ուչ, քան
յերկու ամիսը մեկ անգամ:

VI. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

37. Կուսակցության նահանգական հերթա-
կան կոնֆերենցիան հրավիրում է նահանգական
կոմիտեն վոչ ուչ, քան տարին մեկ անգամ, իսկ
արտակարգ կոնֆերենցիաներ հրավիրվում են
նահանգական կոմիտեյի վորոշմամբ կամ նա-
հանգի սահմաններում գործող կուս. կազմա-
կերպությունների անդամների ընդհանուր թվի
մեկ յերրորդի վորոշմամբ:

Նահանգական կոնֆերենցիան լսում է ու
հաստատում է նահանգական կոմիտեյի, նա-
հանգական հաստատությունների հաշվետվու-
թյունները, քննության է առնում տվյալ նա-
հանգի կուսակցական, խորհրդային, տնտեսա-

կան և արհեստակցական աշխատանքների խըն-
դիրները, ընտրում է նահանգական կոմիտե,
նահանգական վերահսկիչ հանձնաժողով, վեր-
ստուգիչ հանձնաժողով և պատգամավորներ—
համամիութենական համագումարի համար:

38. Նահանգական կոմիտեն ընտրվում է
կոնֆերենցիայի կողմից, ըստ վորում՝ նրա
կողմի մեջ պիտի մտցվեն ինչպես նահանգա-
կան, այնպես ել տվյալ նահանգի այլ խոշոր
բանվորական կենտրոնների աշխատավորները:

Նահանգական կոմիտեն գումարվում է վոչ
ուչ, քան ամիսը մեկ անգամ: Ընթացիկ աշխա-
տանքների համար նահանգական կոմիտեն իր
միջից ընտրում է բյուրո՝ բաղկացած առնվազն
հինգ հոգուց:

Բյուրոյի կազմից առնվազն յերեք հոգի
պիտի զատվեն՝ միմիայն կուսակցական աշխա-
տանքի համար:

Նահանգական կոմիտեյի քարտուղարի հա-

մար սլարտադիր և յոթը տարվա կուսակցական ստափ և բարձրագուս կուսակցական ինստանցիայի հաստատումը (միմիայն այդ բարձրագուս մարմնի համաձայնությամբ՝ թուլյապրվում է բացառությունն անել կուսակցական ստափի նկատմամբ)։

39. Նահանգական կոմիտեն, մարզային (յերկրային) կոմիտեների կամ Կենտկոմի թուլյությամբ, հաստատում է նահանգի գավառային կամ ույոնական կազմակերպությունները, նահանգի սահմաններում կազմակերպում է կուսակցական զանազան հաստատություններ, ղեկավարում է նրանց գործունեությունը, նշանակում է կուսակցության նահանգական որգանի խմբադրություն, վորն աշխատում է նրա հսկողության տակ, կազմակերպում է նահանգական նշանակություն ունեցող ձեռնարկություններ, նահանգի սահմաններում քաշխում է կուսակցության ուժերն ու միջոց-

ները և վարում է նահանգական գրամարկղը։

Նահանգական կոմիտեն համապատասխան Ֆրակցիաների միջոցով ուղղություն է տալիս խորհուրդների, արհեստակցական միությունների, կոոպերատիվ միավորների և այլ կազմակերպությունների գործունեյությանը, ինչպես և անմիջականորեն ուղղություն է տալիս կոմյերիամիության աշխատանքին։ Նահանգական կոմիտեն Կենտկոմի սահմանած ձևով ու ժամանակամիջոցում հաշվետվություններ է ներկայացնում Կենտկոմին՝ իր գործունեյության մասին։ Ինքնավար հանրապետությունների ու մարզերի մարզային կոմիտեները հավասարվում են նահանգական կոմիտեյին։

40. Նահանգական կոմիտեները կոնֆերենցիաների միջնթաց ժամանակամիջոցում պարբերաբար ինֆորմացիոն ղեկուցումներ են տալիս քաղաքային կամ գավառական (ույոնական) կազմակերպությունների ընդհանուր ժո-

շովներին, կոնֆերենցիաներին. բացի այդ, նահանգական կոմիտեները հրավիրում են ընդլայնած պլենումներ կամ նահանգական խորհրդակցություններ՝ բաղկացած գավկոմների ու ռայկոմների (անմիջականորեն նահանգական կոմիտեյին յենթարկվող) ներկայացուցիչներին:

41. Նահանգական քաղաքներում ըստ կարիքի՝ հիմնվում են ռայոնական կազմակերպություններ—գավառական կազմակերպությունների իրավունքներով և անմիջականորեն յենթարկվում են նահանգական կոմիտեյին:

VII. ՇՐՋԱՆԱՅԻՆ (ОБРУЧЕНИЕ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

42. Կուսակցական շրջանային կոնֆերենցիան հրավիրում է շրջանային կոմիտեն վոչ պակաս, քան տարին մեկ անգամ, արտակարգ համագումար հրավիրվում է համաձայն շրջանային կոմիտեյի կամ շրջանի կազմակերպու-

թյան մեջ մտնող անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդականի վորոշման:

43. Շրջանային կոնֆերենցիան լսում և հաստատում է շրջանային կոմիտեյի, վերահսակիչ հանձնաժողովի, վերստուգիչ հանձնաժողովի և այլ շրջանային հաստատությունների հաշվետվությունները, ընտրում է շրջանային կոմիտե, վերահսակիչ հանձնաժողով, վերստուգիչ հանձնաժողով և կուսակցության համամիութենական համագումարի պատգամավորներ:

44. Շրջանային կոմիտեն գումարվում է առնվազն ամիսը մեկ անգամ: Ընթացիկ աշխատանքների համար շրջանային կոմիտեն իր կազմից ընտրում է բյուրո՝ բաղկացած առնվազն հինգ հոգուց:

Բյուրոյի կողմից առնվազն յերեք հոգի պիտի ընտրվեն միմիայն կուսակցական աշխատանքի համար:

Շրջանային կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր ե հինգ տարվա կուսակցական ստաժ և բարձրագուս կուսակցական ինստանցիայի հաստատումը (միմիայն այդ բարձրագուս ինստանցիայի համաձայնությամբ թույլատրելում ե բացառություն անել ստաժի նկատմամբ) :

45. Շրջանային կոմիտեն հաստատում ե ռայոնական կազմակերպություններն ու կուսակցական բջիջները (այնուհետև ռայոնական կազմակերպությունները հաստատվում են յերկրային կոմիտեների կամ ազգ. կի կենտկոմի կողմից), շրջանի սահմաններում կազմակերպում ե զանազան կուսակցական հաստատություններ և ղեկավարում ե նրանց գործունեյությունը, շրջանային կուսակցական որդանի համար նշանակում ե խմբագրություն, վորն աշխատում ե նրա ղեկավարության և հսկողության տակ, կազմակերպում ե շրջանային նշանակություն ունեցող ձեռնարկություններ,

շրջանի շահմաններում բաշխում ե կուսակցության ուժերն ու միջոցները և վարում ե շրջանային գանձարկը: Շրջանայինկոմիտեն համապատասխան Ֆրակցիաների միջոցով ուղղություն և ապլիս խորհուրդների, արհեստակցական միությունների, կուսերատիվ և այլ միավորների աշխատանքներին, ինչպես և անմիջականորեն ուղղություն և ապլիս կոմյերիտիության աշխատանքներին: Շրջանային կոմիտեն կենտկոմի սահմանած ձևով ու ժամանակամիջոցում իր գործունեյության մասին հաշվաւություն և ապլիս մարզային (յերկրային) կոմիտեյին (կամ ազգ. կի կենտկոմին) :

46. Շրջանային կոմիտեները կոնֆերենցիաների միջրնիթայ ժամանակամիջոցում պարբերաբար ինֆորմացիան ղեկուցումներ են ապլիս ընդհանուր ժողովին կամ քաղաքային ու ռայոնական կուսակցական կազմակերպությունների կոնֆերենցիային: Բացի այդ, շրջանային կոմի-

տենները հրավիրում են ընդլայնած պլենումներ կամ շրջանային խորհրդակցություններ՝ բաղկացած սոցիոմների ու խոշոր բջիջների (անմիջականորեն շրջկոմին յենթակա) ներկայացուցիչներին :

47. Սույոր շրջանային քաղաքներում բարձրագուս կուսակցական կոմիտեյի թույլատու-թյամբ կարող են կազմակերպվել սոյոնական կազմակերպություններ, նահանգական քաղաքների սոյոնական կոմիտեյի հավասար լուրավունքներով :

VIII. ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

48. Գալառային կոնֆերենցիան լուծում է ու հաստատում գալառային կոմիտեյի, վերասուպիչ հանձնաժողովի, նահանգական վերահսկիչ հանձնաժողովի լիազորի գեկույումները, քննության և անուծ գալառի կուսակցական,

խորհրդային, անտեսական ու արհեստակցական աշխատանքների հարցերը, ընտրում է կոմիտե, վերասուպիչ հանձնաժողով և նահանգական կոնֆերենցիայի պատգամավորներ : Կոնֆերենցիան հրավիրվում է վեց ամիսը մեկ անգամ :

49. Գալառային կոմիտեն ընտրվում է գալառային կոնֆերենցիաներում : Գալառային կոմիտեն իր միջից ընտրում է մի բյուրո՝ բաղկացած վոչ ավելի 5-7 հոգուց, վորոնց թվում պետք է լինեն սանվազն յերեք ընկերներ՝ ազատված ամեն անակի աշխատանքներից, բայցի կուսակցականից :

Գալառային կոմիտեյի քարտուղարի համարմար պարտադիր է յերեք տարվա կուսակցական ստաժ և բարձրագուս կուսակցական ինտանցիայի հաստատումը (միմիայն ալը բարձրագուս ինտանցիայի թույլատու-թյամբ կարելի յե բացառություն անել ստաժի նկատ-

մամբ) :

50. Գալատական կոմիտեն նախանպասկան կոմիտեյի թույլտվությամբ՝ հաստատում է պալատի վերստացին և սայնական կազմակերպության թյուններն ու րջիջները, պալատի սահմաններում կազմակերպում և գանազան կուսակցական հաստատություններ, գեկրավարում և նրանց պործունեյությունը, կազմակերպում և իր բոլոր գնավառային նշանակություն ունեցող ձեռնարկությունները, կազմակերպում և վերստացին րջիջներին ներկայացուցիչներին խորհրդակցություններ և վարում և պալատային կուսակցական գանձարկղը :

Ծանոթութիւն.—Գալատային կուսակցական կոմիտեն կուսակցական գրականություն և կուսակցական սրգան կարող և հրատարակել միմիայն նախանգական կոմիտեյի թույլտվությամբ :

51. Գալատային կոմիտեն պալատի սահմաններում կուսակցական Փակցիտներին միջո-

ցով ուղղություն և տալիս գնավառային գործադիր կոմիտեյի, ինչպես և արհեստակցական կազմակերպություններին, կոտպերատիվ և այլ միավորումներին աշխատանքներին, ինչպես և անմիջականորեն ուղղություն և տալիս կոմիտեյի թույլտվության կազմակերպության աշխատանքին :

IX. ՎՈՂՈՍԱՅԻՆ (ՌԱՅՈՆԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

52. Վոլոստում բարձրագույն մարմինը հանդիսանում և տվյալ վոլոստի կուսակցության անգամներին ընդհանուր ժողովը :

Ծանոթութիւն.—Ընդարձակ վոլոստներում, ուր ընդհանուր ժողով հրավիրելը դժվար և, թույլատրվում և ընդհանուր ժողովը փոխարինել վոլոստային կոնֆերենցիայով : Այդպիսի կոնֆերենցիաներ հրավիրվում են անմիջապես յերեք ամիսը մեկ անգամ :

53. Վոլոստային (ուսյունական) ընդհանուր

ժողովը հրավիրվում է առնվազն ամիսը մեկ անգամ: Ընդհանուր ժողովը՝ ա) վճռում է կուսակցության անդամների ընդունելութան ու փոստաման հարցերը՝ ներկայացնելով իր վորուչումները բարձրագույն կուսկոմիտեներին ի հարստացութուն, բ) քննութան է առնում ու հաստատում վոլոստային կոմիտեյի հաշվետվութունը, գ) ընտրում է վոլոստային կոմիտե, գ) պատգամավորներ է ընտրում գավառային և այլ կոնֆերենցիաների համար, ի) քննում ու հաստատում է վոլոստային գործադիր կոմիտեյի ֆրակցիայի հաշվետվութունը:

54. Վոլոստային կոմիտեն ընտրվում է վոլոստի կուս. ժողովում կամ կոնֆերենցիայում վեց ամիս ժամանակով: Վոլոստային կոմիտեյի քարտուղարների համար պարտագիր է մի տարվա կուս. ստաժ:

Մանրագրում.—Այն վոլոստներում, ուր 3-ից

պակաս գյուղըջիջներ կան՝ վոլոստային կոմիտե չի կազմակերպվում. գավառային կոմիտեներն այդ շրջանների վոլոստային կենտրոնի բջիջներին կարող են հանձնարարել կատարել վոլոստային կազմակերպության առանձին պարտականութունները:

55. Վոլոստային (ոսյոնական) կոմիտեն զուգարվում է առնվազն յերկու շաբաթը մեկ անգամ:

56. Վոլոստային (ոսյոնական) կոմիտեն ուղղութուն է տալիս ու ղեկավարում է վոլոստի (ոսյոնի) բոլոր կազմակերպութուններին աշխատանքները, կատարում է կուսակցութան բոլոր անդամների սամարսագրումը, կազմակերպում է գրականութան բաշխում, միախնդներ, գասախոսութուններ և այլն, կազմակերպում է նոր բջիջներ ու ներկայացնում է գավառային (շրջանային) կոմիտեյին ի հաստատութուն, վարում է կուսակցութան վոլոստային (ոսյոնական) գրամարկղը, սովոր մեկ

անգամ իր գործունեյության մասին հաշ-
վետվություն և ներկայացնում գալառային
(չրջանային) կոմիտեյին, կուսակցական Ֆրակ-
ցիայի միջոցով ուղղություն և տալիս վորու-
տային (ուսյոնական) գործադիր կոմիտեյի աշ-
խատանքներին:

X. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՉԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

57. Կուսակցական կազմակերպության
հիմքը կուսակցական բջիջն է: Բջիջը հաստատ-
վում է շրջանային, գալառային կամ ուսյոնա-
կան կոմիտեյի կողմից՝ առնվազն կուսակցու-
թյան յերեք անդամից բաղկացած:

58. Մեծ թվով բանվոր ունեցեղ խոշոր ձեռ-
նարկություններում և ամբողջ ձեռնարկու-
թյունն ընդգրկող համադործարանային բջիջ-
ներում կարող են կազմակերպվել բջիջներ ըստ
ցեխերի (ցեխ-բջիջներ), ըստ վորում յուրա-
քանչյուր ասանձին ղեկաքում այդ բջիջները

հաստատվում են շրջանային կոմիտեյի (գալ-
կոմի) կամ ուսյոմի (քաղաքներում) կողմից:

59. Բջիջն այն կազմակերպությունն է, վո-
րը ավյալ վայրում բանվոր-գյուղացիական
մասսաներին կապում է կուսակցության ղեկա-
վար մարմնի հետ: Բջիջի նպատակն է՝ 1) կու-
սակցության լողուններն ու վորոշումները կի-
րառել մասսաներում: 2) Նոր անդամներ գրա-
վել ու նրանց դաստիարակել: 3) Աջակցել տե-
ղական կոմիտեյին՝ նրա կազմակերպչական ու
ազիտացիոն աշխատանքներում: 4) Վորպես
կուսակցական մարմին, ախտիվ կերպով մաս-
նակցել յերկրի անտեսական ու քաղաքական
կյանքին:

60. Ընթացիկ աշխատանքները վարելու հա-
մար բջիջն ընտրում է մի բյուրո՝ վեց ամիս ժա-
մանակով:

Բջջի քարտուղարի համար սլարտագիր և
առնվազն մեկ տարվա կուսակցական ստաժ.

բացատու թյուն թույլատրվում է միմիայն շրջկամի (զավկամի) կամ սակկամի (քաղաքնե-րում) համաձայնու թյամբ:

XI. ՎԵՐԱՀԱՅԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

61. ՀԱՄ. ԿԿ. (բ) միտանականության ու հեղինակության ամբողջման գործում կուսակցությանն աջակցելու, բանվոր դատակարգի լավագույն մասերը կուսակցության շարքերը ներգրավելու, կուսակցության անդամների կողմից ՀԱՄ. ԿԿ. (բ) ծրագրի ու կանոնադրու-թյան խախտման դեմ պայքարելու, ամեն տե-սակետից խորհրդային մարմինների գործունե-յության մեջ կուսակցական գիծն ապահովելու և խորհրդային ու անտեսական ապագարտի լավացման ու պարզացման համար միջոցներ մշակելու նպատակով՝ մարդային (область), յերկրային, նահանգական և շքանային կոնֆե-

րենցիաներում ընտրվում են վերահսկիչ հանձ-նաժողովներ, վորոնք հաշվետու յեն նրանց ընտրող համապատասխան մարմինների ուսաջ:

Մանրություն. — Շրջանային Վ. Հ. կազմակերպ-վում են Կենտկամի ու ՀԱՄԿԿ (բ.) ԿԿ. Հ-ի թույլատրությամբ:

62. Վերահսկիչ հանձնաժողովների վորո-չումները չեն կարող փոխվել համապատասխան կուսկամների կողմից, բայց ուժի մեջ են մանում միայն վերջինների համաձայնությամբ և նր-րանք են, վոր կենտադործում են այլ վորոչում-ները:

Անհամաձայնության դեպքում հարցը միա-ցյալ նիսա և փոխադրվում: Յեթե կամիտեյի հեա համաձայնություն չի կայանում, հարցը համապատասխան կուսակցական կոնֆերեն-նցիայի կամ բարձրագա վերահսկիչ հանձնա-ժողովի կամ կուսակցության համադումարի լուծման և դրվում:

Ա. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁ-
ՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

63. ԿՎՀ ընտրվում է առավել լայն և աշխարհի բանավորներից ու գյուղացիներից, վորոնք անհրաժեշտ չափի կուսակցական, խորհրդային, անտեսական կամ անմիջական արտադրական փորձ ունեն։ ԿՎՀ աշխ անդամները, վորոնք նշանակված են անմիջականորեն ԿՎՀ կամ ԲԳՏ-ում աշխատելու համար, սկսած է ունենան անվազն տաս ատրվա կուսակցական ստաժ : ԿՎՀ աշխ անդամները, վորոնք աշխատում են անդամական մարմիններում—վոչ սրահատ, քան յոթ ատրվա ստաժ և գաղղյաճի բանավորներն ու գյուղացիները—հինգ ատրվա ստաժ :

64. ԿՎՀ անդամները չեն կարող ինել միաժամանակ նաև Կենտրոնի անդամ և չեն կարող գրավել վարչական ու անտեսական պոստեր :

Ծանոթութուն.—Բացառութուններ թույլատրվում են յուրաքանչյուր անդամ ՀԱՄԿԿ (բ.)

Կենտրոնի և ԿՎՀ-ի նախագահութան հասուկ թույլատրվածք :

65. ԿՎՀ պլենումը հրավիրվում է յերեք ամիսը մի անգամ : Պլենումների միջին ժամանակամիջոցում ԿՎՀ մարմինների ընթացիկ աշխատանքները գեկավարելու համար կազմվում է նախագահութուն՝ բաղկացած 21 անդամից ու իններ թեկնածուից և վերջինիս գործադիր մարմին—քարտուղարութուն, ինչպես և կազմվում է ԿՎՀ-ի կոլլեգիա—ՀԱՄ ԿԿ (բ) կուսակցական ետիկայի, կանոնադրութուն ու ծրագրի խախտման գործերը քննելու համար :

66. Կուսակցական համագումարներին ու կոնֆերենցիաներին՝ ազգ. ԿԿ, յերկրային, մարզային, նահանգային, շրջանային, գավառային և այլն, ինչպես և պլենումներին, խորհրդակցութուններին, նիստերին ու ժողովներին՝ ԿՎՀ անդամները մասնակցում են խորհրդ-

զաւղցաւ հան ձայնի իրավունքով:

ՀԱՄ ԿԿ (բ) Կենտրոնի պլենումներին ներկա չեն լինում միայն ԿՎՀ նախագահութեան անդամներն ու թեկնածուները: Այն պէտքով, յերբ հրավիրվում են Կենտրոնի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումներ, ԿՎՀ անդամները մասնակցում են այդ պլենումներին վճռական ձայնի իրավունքով:

ԿՎՀ նախագահութեանը յերեք անգամ ու յերեք անգամ լի և ուղարկում՝ մասնակցելու Կենտրոնի քաղ. բյուրոյի աշխատանքներին և հինգ անգամ ու հինգ անգամ լի—մասնակցելու Կենտրոնի կազմութեան ու քարտուղարութեան նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

67. ԿՎՀ իրավունք ունի իր իրավասութեան սահմաններում հանձնարարութեաններ անելու կուսակցութեան բոլոր անդամներին ու կուսկազմակերպութեաններին:

Բ. ԱԶԳ. ԿԿ-ի ՄԱՐԶԱՅԻՆ (ՅԵՐԿՐԱՅԻՆ), ՆԱՀԱՆԳՈՒԿԱՆ ՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀԱՅԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

68. Ազգ. ԿԿ ԿՎՀ-ի, մարգային (յերկրային), նահանգական ու շրջանային ՎՀ անդամներին և թեկնածուներին թիվը վերջում է ՀԱՄ. ԿԿ (բ) Կենտ. Վ. Հ.՝ համաձայն կազմակերպութեան գործընթացի, շրջանի եկտնութեանի և այլ ստանձնատեղութեաններին:

ՎՀ անդամներն ու թեկնածուներն բնարկվում են գլխավորապես կուսակցական առարկայից ամենատեղիում բանվորներից ու գյուղացիներից, ըստ վերում ազգ. կամի. ԿՎՀ-ի և շրջանային (յերկրային) ՎՀ-ի համար—տեղական յոթ տարվա, իսկ մնացած ՎՀ-ներին համար—տեղական հինգ տարվա ստաժ ունեցողներից, վերոնք ունեն կուսակցական, խորհրդային և ազհեստակցական աշխատանքի համապատաս-

խան փորձ և կարող են իրականացնել իսկական
կուսակցական ու խորհրդային կոնսուլը:

Ծանոթութուն.—Բացառութուններ թույլատրե-
վում են ՀԱՄԿԿ (բ.) կենտկոմի և ԿՎՀ-ի հա-
մաձայնութամբ:

69. ՎՀ-ի անդամները չեն կարող միաժա-
մանակ լինել նաև կուսկոմի անդամ և չեն կարող
գրավել պատասխանատու վարչական գիրքեր:

Ծանոթութուն.—Բացառութուն թույլատրվում է
միայն ՀԱՄԿԿ (բ.) ԿՎՀ-ի թույլատրությամբ:

70. ՎՀ պլենումն ընտրում է նախագահու-
թյուն և կոլլեգիա և ուրվազծում է ԲԳՏ կոլլե-
գիայի կազմը:

71. ՎՀ անդամներն ու թեկնածուները մաս-
նակցում են համապատասխան կուսկոլլեգիայի
պլենումի նիստերին, նրանց կազմակերպու-
թյան սահմաններում՝ խորհրդակցական ձայնի
իրավունքով:

ՎՀ նախագահութունն իր անդամների մի
մասին ուղարկում է մասնակցելու համապա-

տասխան կուսկոմների բյուրոների նիստերին՝
խորհրդակցական ձայնի իրավունքով:

72. Այն դեպքում, յերբ ՎՀ ու կուսկոմ խան-
ցի վերջումները տարբերվում են իրարից՝ նը-
րանք միացյալ նիստեր են գումարում: Համա-
ձայնության չգարու դեպքում հարցը փո-
խադրվում է ՀԱՄ Կոմկուսի ԿՎՀ, յեթե տարա-
ձայնություն է ծագել ազգային կոմկուսի ԿՎՀ և
կուսկոմ խանցի միջև, ինչպես և ազգային կոմ-
կուսի ԿՎՀ կամ մարզային (յերկրային) ՎՀ
մեջ ջմանող յերկրային (մարզային) և նահան-
գական ՎՀ-ների ու կուսկոմ խանցի միջև, իսկ
յեթե տարաձայնվել են ազգային կոմկուսի ԿՎՀ
կամ յերկրային (մարզային) ՎՀ մեջ ջմանող նա-
հանգական ու մարզային ՎՀ-ները և կուսկոմ խ-
անցի վերջումները՝ հարցը փոխադրվում է
համապատասխան ազգային կոմկուսի ԿՎՀ կամ
յերկրային (մարզային) ՎՀ:

73. ՎՀ իր կոմպեկտնեցիայի սահմաններում

իրավունք տնի խնդիրներ տարու կուսակցու-
թյան բարբ անդամներին և կազմակերպու-
թյուններին:

Գ. ՎՀ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

74. ՎՀ մարմինները և ստորին կազմակեր-
պությունները ու լայն բանվորական և գյուղա-
ցիական մասսայի միջև անմիջական ու կենդանի
կապն իրականացնելու նպատակով՝ կազմվում
և ՎՀ լիազորները ինստիտուտ՝ շրջանային և
զավաստական կազմակերպություններում:

75. ՎՀ լիազորներին առաջ են քաշում շր-
ջանային կամ զավաստական կուսկոնֆերենցիա-
ները, առավել լայն է հինգ տարուց վոչ պակաս
ստամ ունեցող և կուսակցականորեն ամենից
կոփված բանվորներից ու գյուղացիներից և
հաստատում են համապատասխան ՎՀ-ները:

Մանրագրում.—Ցանկալի յե լիազորներին առաջ
քաշել ՎՀ-ի անդամների շարքերից:

76. Քաղաքական և անտեսական տեսակետ-
ներից ամենախոշոր ու նշանակելի ուսյուններում
ՎՀ լիազորներն ազատվում են բոլոր այլ աշխա-
տանքներից, բացի կուսակցականից, բոլոր
մյուս ուսյուններում նրանք աշխատում են պաշ-
տոնների համակցությամբ (совместительство):

77. ՎՀ լիազորներն իրավունք ունեն մաս-
նակցելու համադատատեսան կուսկոմիտեյի նիս-
տերին, կուսկոնֆերենցիաներին, ՎՀ խորհր-
դակցություններին ու նիստերին՝ խորհրդակ-
ցական ձայնի իրավունքով:

XII. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

78. Կարմիր բանակում և Կարմիր նավա-
տորմում կուսակցական աշխատանքի բնդհա-
նուր զեկավարությունն իրականացնում և ԲԳԿԲ
(բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի)
Քաղաքական վարչությունը, վորպես կենսակո-

մի գինւորական բաժին: Հանրապետութեան Քաղվարչութեանն (ՊՄԽՐ) իր գեկավարութեանն իրականացնում է իր կողմից նշանակվող բազմ-բաժինների (ճակատների, գինւորական շրջանների, նավատորմերի, բանակների, գիվիդիանների) գինկոմների և համապատասխան բանակային կոնֆերենցիաներում քննարկող կուսակցական հանձնաժողովների մեջնցով:

Իջիջներն ու կոլլեկտիվները կարմիր բանակում և նավատորմում աշխատում են կենտկոմի կողմից հաստատվող հատուկ հրահանգներին հիման վրա:

79. Չինվորական շրջանների, նավատորմերի և բանակների բազմբաժինների պետերի համար պարտադիր և յոթնամյա կուսակցական ստաժ, գիվիդիանների և բրիգադանների բազմբաժինների պետերի համար՝ չորսամյա կուսակցական ստաժ:

80. Կուսակցական հանձնաժողովները վա-

րում են կուսակցութեան անդամների և թեկնածուների բնույնման և վաւարման գործերը և հետեւում են կուսակցութեան ծրարի ու կանոնադրութեան խտրամանը: Հանձնաժողովի անդամների համար պարտադիր և հինգամյա կուսակցական ստաժ:

81. Կարմիր բանակում և նավատորմում կուսակցութեան անդամների ու թեկնածուների նշանակման և տեղափոխութեան իրավունքը պատկանում է համապատասխան քաղվարմիններին:

Ղեկավար կուսակցական աշխատավորների (հրամանատարական և քաղաքական կադմ) տեղափոխումները համաձայնեցնելու կարգը սահմանվում է կենտկոմի հրահանգներով:

82. Քաղվարմինները պարտավոր են սերտ կապ պահպանել տեղական կուսակցական կոմիտեների հետ՝ վերջինների աշխատանքներին քաղվարմինների գեկավարներին և գինկոմներին

մշտական մասնակցութեան, ինչպէս և կուս-
կումներում սխտեմատիքաբար զինվորական
մասերի քաղաշխատանքի մասին քաղմարմին-
ների պետերի ու զինկումների զեկուցումները լը-
սելու՝ միջոցով:

Թեկնածուներ ընդունելու, թեկնածու թյու-
նից կուսակցութեան անդամ վոխադրելու, կու-
սակցական կանոնադրութեան խախտումների
գեմ պէքարելու գործում կուս. հանձնաժողով-
ների աշխատանքի զեկավարութեանը տեղական
չըջկումները և վերահսկիչ հանձնաժողովները
կենսագործում են գիվիդիայի և չըջանային
կուս. հանձնաժողովներում՝ այդ աշխատանքի
դրվածքի (постановка) մասին սխտեմատիքա-
բար զեկուցումներ լսելու և այդ կուս. հանձնա-
ժողովներին համապատասխան հրահանգներ
տալու միջոցով:

XIII. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ

83. Խստագույն կուսակցական գիսցիպլի-

նան (կարգապահութեանը) կուսակցութեան
բոլոր անդամներին ու բոլոր թեկնածուների և
բոլոր կուսակցական կազմակերպութեանների
առաջնագույն պարտականութեանն է: Կուսակ-
ցական կենտրոններին վորոշումը պետք է իրա-
կանացեւ արագ և ճիշտ կերպով, միեւնույն ժա-
մանակ կուսակցութեան ներսում կուսակցական
կյանքին վերաբերվող բոլոր վիճելի հարցերի
քննութեանը միանգամայն ազատ ե՝ մինչև այդ
հարցերի մասին վորոշում ընդունելը:

84. Բարձր կազմակերպութեանների վորո-
շումները չկատարելուն և կուսակցութեան հան-
րային կարծիքով հանցավոր ճանաչված այդ
գանցանքներին (проступки) հետևում է. կազ-
մակերպութեանների համար՝ հանգիմանու-
թյուն, ժամանակավոր կոմիտեյի նշանակում
բարձրից և ընդհանուր վերացուցակադրում
(կազմակերպութեան ցրումն): Կուսակցութեան
անդամների համար՝ այս կամ այն տեսակի հան-

դիմանուլթյուն (նկատողություն, կշտամբանք
և այլն), հրապարակային հանդիմանություն,
ժամանակավոր հեռացում պատասխանատու
կուսակցական և խորհրդային աշխատանքից,
վտարում կուսակցությունից, վտարում հու-
սակցությունից՝ դանդանքի մասին վարչական և
դատական մարմիններին հայտներու պայմանով:
Թեկնածու փոխադրելը, վերադես կուսակցական
պատժի միջոց, արգելվում է:

85. Դիպլոմային ար դանդանքները քննում են
ընդհանուր ժողովները և վերահսկիչ հանձնա-
ժողովները՝ սովորական կարգով, համապա-
տասխան ինստանցիաներում:

XIV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ

ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

86. Յուրաքանչյուր կազմակերպության
դրամական միջոցները կազմվում են անդամա-
վճարներից, բարձր կուսակցական կազմակեր-

պությունների նպաստներից (սուբսիդիա) և
այլ հասույթներից (поступления):

87. Անդամավճարները կուսակցության
անդամների և թեկնածուների համար՝ սահման-
վում են նրանց աշխատավարձի կես տոկոսից
վոչ պակաս: Սահմանվում է անդամավճարի չա-
փի չորս կտակգործի՝ համաձայն աշխատա-
վարձի կողմերի. առաջին կտակգործիան՝ վճա-
րում է կես տոկոս, յերկրորդ կտակգործիան՝ մեկ
տոկոս, յերրորդ կտակգործիան՝ յերկու տոկոս,
չորրորդ կտակգործիան՝ յերեք տոկոս:

88. Անորոշ աշխատավարձ ստացող անձե-
րի, որինակ, դյուդայիների, անդամավճարնե-
րի չափը սահմանում են տեղական նահանգական
կամ իտենները:

89. Բոլորովին սղատվում են անդամավճար
տարուց զործազուրկները և սոցիալական ապա-
հովության նպաստով ապրողները (հաշման-
դամները և դատամյուլները):

90. Մուտքի վճարները պանծվում են թեկնածու ընդունվելիս՝ ստացած աշխատավարձի յերեք ասիոսի չափով, և այդպիսի վճարումներից վոչ վոք չի ազատվում:

91. Առանց հարգելի պատճառի յերեք ամիս անդամավճարներ չվճարած կուսակցության անդամներն ու թեկնածուները կուսակցությունից դուրս յեկած են համարվում, վորի մասին հայանվում և ընդհանուր ժողովին՝ ի պիտություն:

92. Անդամավճարների և կուսակցական հասկացումների պանծման կարգը սահմանվում և հասուկ հրահանգով:

XV. ՖՐԱԿՑԻԱՆԵՐՆ ԱՐՏԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

93. Վոչ պակաս, քան կուսակցության յերեք անգամ ունեցող բոլոր համագումարներում, խորհրդակցություններում և ընտրովի մտրմիներում (խորհրդային, արհեստակցա-

կան, կոոպերատիվ և այլն) կազմակերպվում են ֆրակցիաներ, վորոնց խնդիրն և՛ համակարգանի (всесторонне) կերպով ուժեղացնել կուսակցության ազդեցությունը, կենսագործել նրա քաղաքականությունն արտակուսակցական միջավայրում և կուսակցական վերահսկողությունը (կոնտրոլը) բոլոր հիշատակված հաստատությունների ու կազմակերպությունների աշխատանքի վերաբերմամբ:

Ընթացիկ աշխատանքները համար ֆրակցիաները կարող են ընտրել բյուրոներ:

94. Վորևե կազմակերպության ֆրակցիան վերաբերող հարցեր կուսակցական կոմիտեյում քննելիս՝ կազմակերպության ֆրակցիան իր ներկայացուցիչներն և ուղարկում համապատասխան կոմիտեյի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

95. Ֆրակցիաներն, անկախ իրենց նշանակությունից, ամբողջապես յենթարկվում են

համապատասխան կուսակազմակերպութիւններին: Բոլոր այն հարցերում, վերոնց վերաբերմամբ զոյություն ունեն համապատասխան կուսակցական կազմակերպութիւններին որինական վերջումներ, Փրակցիաները պարտավոր են խտտիվ և անշեղ կերպով հետևել այդ վերջումներին: Կոմիտեն իրավունք ունի Փրակցիայի կազմի մեջ մտցնել և նրանից հեռացնել իր ցանկացած կուսանդամին՝ պարտավորապես հայտնելով Փրակցիային նման ձեռնարկման պատճառները, ընդ սմին հետ կանչելն ու նոր անդամ մտցնելը պետք է կատարվի համաձայն այն արտակուսակցական մարմնի կանոնադրութեան ու կանոններին, վերին առընթեր աշխատում է Փրակցիան: Իրենց ներքին կյանքի և ընթացիկ աշխատանքի հարցերում Փրակցիաներն ինքնավար են:

Փրակցիայի իրավասութեան մեջ մտնող վորևէ հարցում կուսակցական կոմիտեյի և

Փրակցիայի միջև ելական տարաձայնություն ծագելու դեպքում կոմիտեն պարտավոր է կրկին անդամ քննել այդ հարցը Փրակցիայի ներկայացուցիչներին հետ միասին և ընդունել Փրակցիայի անհաղաղ կատարմանն յենթակա վերջնական վերջում:

96. Այն կազմակերպութիւններում, վերոնց մեջ աշխատում է Փրակցիան, բոլոր կարևորագույն պաշտոնների թեկնածուներին նշանակում է Փրակցիան՝ համապատասխան կուսակցական կազմակերպութեան հետ միասին: Նույն այս կարգով է կատարվում մի պաշտոնից մյուսին փոխադրելը:

97. Քաղաքական նշանակություն ունեցող և Փրակցիայի քննութեանն յենթակա բոլոր հարցերը պետք է ձեռվին կոմիտեյի ներկայացուցիչներին ներկայութեամբ:

98. Այն հարցերը, վերոնք յենթակա յեն Փրակցիայի աշխատանքի միջավայր հանդիսա-

ցող անկուսակցական կազմակերպութեան լուծմանը և ունեն սկզբունքային նշանակութեան, ինչպէս և բարձր այն հարցերը, վարոնց առթիվ կամուսնիտաների համաձայնեցրած յերայթ և պահանջվում, պետք և նախապէս քննվեն բնդհանուր ժողովում և Ֆրակցիայի բյուրոյում:

99. Վերեւ արտակուսակցական կազմակերպութեան Ֆրակցիայում լուծված յուրաքանչյուր հարցի առթիվ Ֆրակցիայի բարձր անդամները ալյալ կազմակերպութեան ընդհանուր ժողովում պարտավոր են քվեարկել միաձայն: Այս կանոնը խախտողները յենթարկվում են կարգապահական ներգործութեան (պատժի) սովորական կարգով՝ համաձայն կանոնադրութեան:

100. Արտակուսակցական մարմիններին առնթեր զործող Ֆրակցիաներն անմիջական կերպով չեն հարարեցվում ստորադաս մարմիններին Ֆրակցիաների հետ: Իր վորոչում-

ները կուսակցական զծով անցկացնելու անհրաժեշտութեան զգալու զեպքում՝ այս կամ այն Ֆրակցիան այդ վորոչումներն իրազործել և տալիս համապատասխան կուսակցական կուսակցի միջոցով (կամ խանջի քարտուղարի և Ֆրակցիայի բյուրոյի անդամի ստորադրութեանը կրող գրութեամբ):



<< Ազգային գրադարան



NL0180930

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

